# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԲԸԱՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Մ. Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է 593 ծածկագրով ԲԸԱՀ ընթացակարգի արդյունքում 2009թ. մարտի 19-ին կնքված և սեղանամատյանում թիվ 593 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում 2016թ-ի փետրվարի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

<u>Փոփոխության պատճառ:</u> Գնման պահանջ

Փոփոխության նկարագրություն: Կնքվել է լրացուցիչ համաձայնագիր՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց հաստատելու մասին:

<u>Փոփոխության հիմնավորում:</u> ՀՀ կառավարության 24/12/2015թ. թիվ 1555-Ն որոշում

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ռուզաննա Գաբրիելյանին:

Հեռախոս՝ 011800796

Էլ փոստ՝ rgabrielyan71@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

23.03.2009թ. կնքած թիվ 593 վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ՀՀ քաղաք Մասիս << 08.. >> փետրվարի 2016թ

Մենք՝ ՀՀ Արարատի մարզի Մասիսի քաղաքապետարանի ՝ ի դեմս Մասիսի քաղաքապետ Ս.Հակոբյան, այսուհետ <<ՎԱՐՁԱՏՈՒ>> մի կողմից և ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի, այսուհետ <<ՎԱՐՁԱԿԱԼ>> մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 23.03.2009թ. կնքած թիվ 593 վարձակալության պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 3.2 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1 Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով ՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը ՝ համաձայն հավելված 1-ի:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածել կողմերի միջև 2016թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

## 2. Այլ պայմաններ

2.1 Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու/2/ հավասարազոր օրինակից և տրվում են կողմերին

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4 Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

ՀՀ Արարատի մարզ Մասիսի քաղաքապետարան

ք.Մասիս քաղաքապետարանի վարչական շենք

ՀՎՀՀ 03801428

Հ/Հ 900435101077

ՀՀ ՖՆ ԿԳ ԳԳ

Մասիսի քաղաքապետ

Ս.Հակոբյան

(ստորագրություն)

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ

ք.Երևան, Մ. Ադամյան 1

ՀՎՀՀ 02629081

Հ/Հ

Կենտրոնական գանձապետարան

գործառնական վարչություն

Ղեկավար Ա.Արզումանյան

(ստորագրություն)

Հավելված 1
23.03.2009թ. կնքած թիվ 593 վարձակալության
պայմանագրի թիվ 6փոփոխության

## Վճարման ժամանակացույց*

հազար դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ըստ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ՀՀ Մասիսի քաղաքապետարանի հասցեում գտնվող վարչական շենքից 156.25քմ տարածքից վարձակալության ծառայություն | 78.12 | 117.2 | 156.25 | 195.31 | 234.4 | 273.43 | 312.5 | 351.6 | 390.62 | 429.68 | 468.8 | 468.8 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

ՀՀ Արարատի մարզ Մասիսի քաղաքապետարան

ք.Մասիս քաղաքապետարանի վարչական շենք

ՀՎՀՀ 03801428

Հ/Հ 900435101077

ՀՀ ՖՆ ԿԳՎ

Մասիսի տարածքային բաժին

_______________ Ս.Հակոբյան
(ստորագրություն)

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ

ք.Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ
Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն

Ղեկավար
_______________ Ա.Արզումանյան
(ստորագրություն)